

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկա՛ն	7 "
վեցամս'այ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկա՛ն	8 "
վ.ցամսեայ	8 "
Անտրիկայի համար	3 ռ.
սարեկա՛ն	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Երանուցման տղր և սուրճի և-ուրի համար 40 սանթիմ իսկ վերջին և-ուրի համար 20 սանթիմ է: Կրեմլի սահմաններու համար 2) 0/0 զեղջ կր:լայ:

Վառնայի համար ձեռն ֆե 10 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՍԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐՅԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Համակ և ցրակ ուղիչ հոլբուգրուրանս հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռն ֆե

15 ՄԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռն ֆե

20 ՄԱՆԹԻՄ

Գրութիւնք և յն ռուբլ

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

## Ա Յ Ա Բ Ա Ղ Դ Ը

Կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ՛ Սօֆիոյ քաղաքի Ա. վիճակահանութեան, Բ. կարգի ամենամեծ շահեստը ֆր. 20.000 ոսկի շահած է թիւ 32661 տոմսակը, ծախուած գլխաւոր գործակալու թեանս ձեռքով. քաղաքիս մէջ. Յիշ բաղդը վայելեց հայ օրիորդ մը:

Իսկող կոյր է. չգիտցուի թէ երբ կը ժպտի. ամէն պարագայի մէջ խելացիութիւն է ըստ զոր փորձել՝ այն ալ գլխաւոր գործակալութեանս հայթայթած տոմսերով, թէ ո՛վ շունի, լաւ է որ ձեռք տայ բաղդին:

ՍՍՐԳԻՍ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ Սօֆիոյ քաղաքի վիճակահանութեան, Երաշխաւորեալ Իլիանական կառավարութեան է

## ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Կիլիկիան թղթակցութիւնը զօր ներկայ թուոյն մէջ արտասուած ենք «Նշակաւն» շատ տըխուր ու աղէտաբեր մտահոգութիւններու կը մատնէ ազգը: Ատիկա, նախերգանք մը ըլլալու կոչուած է ապագայ օրերուն՝ զորս ստիպուած պիտի ըլլան քկարգալ ազգովին քաջ կիլիկիոյ վրայ, թուրքին վայրագ զինուորներուն յարձակմանց դէմ մղելիք իր հերոսական կռիւններէն ետքը:

Այս, Սուլթանը կը պատրաստուի այժմ կիլիկիան ալ քարուքանդ ընել, ինչպէս բրաւ Սասունը, ինչպէս բրաւ բոլոր հայաստան և քիչ շատ ընդգրկուած կարող կարծած անգերը: Սուլթանը կուզէ ու է ապագայ մտահոգութեան ընդ միշտ զերծ մնալու համար հիմակուրնէ իսկ Ձէյթունը պարպել հայերէն, վանել քաջ զէյթունցիները իրենց լեռներէն, իր անարգ զինուորները հաստատել Ձէյթունի բարձրութեանց վրայ:

Անշուշտ նոր ծրագիր մը չէ որ Համիտը կը փորձէ իրականացնել. Ձէյթունը, Սասունէն ալ աւելի մեծ փուշ մըն էր իր աչքին. բայց 95ի ապստամբութեանց յետոյ, դարուս այս մեծագոյն գազանը չի կրցաւ իր ոճրին անմիջական իրագործումը ապահովել:

ժամանակին հետ, երբ մէկ կողմէն մոռացումը՝ միւս կողմէ պետութեանց քաղաքական պայմաններուն ստեղծած նոր վիճակը եկան սուպարէզը ազատ թողուլ իր առջեւ. Վոսփորի ճիւղը, որ ոչ մէկ առիթ չի փայլցնէր երբ իրեն նպաստաւոր է, գործի սկսաւ: Մեր մեծ ու պզտիկ կաթողիկոսներուն, մոլլապատրիարքներուն և վեղարաւոր ու ոչ վեղարաւոր այդ պիղծ վահակին բոլոր պնակալէզու թիւնները, քմիքները, գաւառանութիւնները, «հաւատարիմ հպատակի» անորակելի քստորնացումները, բոլորն ալ ի գերիւ ելան: Սուլթանը կիլիկիոյ հայոց սզգային կայուածները նախ կողոպտելէ, զանոնք ապագայ խողխողիչներու բաշխելէ ետքը, կը ծրագրէ մտաւրում քանգումի գործը: Ատիկա արգէն պաշտօնական օրինակ մը տալ չի՝ նշանակել թուրք խուժանին, անոր հասկցնելու համար թէ, կարելի է կեանքովին կալուածները կողոպտել և զայն մահամետականներուն բաժնել, առանց ու է երկնային կամ երկրային պատժի:

Ահա նոր հոգ մըն ալ, որ կուգայ իր անհրաժեշտութեամբ ու անմիջականութեամբ, ծանրանալ մեր արգէն բաղձատեղակ հոգերով ընկճուած ազգին վրայ: Եթէ նկատի առնենք թէ կիլիկիան մեր ազատագրութեան


գործին համար ամենակարեւոր պեր մը ունի իրեն վերապահած, թէ Սասունի քայքայումէն ետքը, ան մեր միակ ապաւէնն է ապագայ մեծ կոռուին փողը հնչելու տանն, այն տանն պիտի հասկը նանք թէ որքա՛ն հայ ազգը պէտք է դուրգուրայ այսօր կիլիկիոյ վրայ և որքա՛ն մեծ զոհողութիւններ յանձն առնելու է անիկա կանգուն պահելու համար:

Ահա գործունէութեան ճշմարիտ ապարէզ մը՝ որ այլեւս անժխտելիօրէն կը բացուի ազատութեան ռահմիրաններուն առջեւ: Ինչոր պողոտաները, բոլոր ինքնախաբուծիւնները, բոլոր ցուցամուրութիւնները յաշտ ժողովուրդին գործի վրայ երբեւնալու համար, երբ, — թրքահայ խնդրին վրայ խօսելով, — չեն կեղծունանար գործնականապէս կիլիկիոյ պաշտպանութեան շուրջը, պարզ շահագործումներ են, ինքնապոհութեան շրջարներուն տակ ծածկուած՝ բայց իրապէս թել մը մալ իսկ չի գոհող անուանական մենաշընորհեալ հերոսներու տխուր զաւանցանքներ:

Բայց անոնք որ ապուշ պարծանքն ունին Հայաստանի ազատութեան գործը իրենց մօտօրօ ըրած ըլլալու, որոնք ծիծաղելի յաւակնութեամբ լռելի կը ճշան երբ տեսնեն որ պոչերին բռնուելու վրայ է ինչպէս պիտի արգարացնեն ինքզինքներին, երբ հոս ու հոն ոտքերնին փռած կը նստին միմիայն շաւաթանութիւններ որոճալու համար: Ինչպէս պիտի արգարացնեն իրենց մեղկութիւնը, յանցապարտութիւնը, պատախանատութիւնը հանդէպ ազգին՝ որուն բեռը աւելցուցած են միայն և թշուառութիւնը բաղձապատկած:

ՇՈՒՄ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻՈՅԻՑ



10 Մայիս 1906

Քանի մը ժամանակէ իվեր կիլիկիայի վիճակը ծանրանալու վրայ է:

Սոյ վանքը թլան անունով ազարակ մը ունի շատոնց իվեր: Այժմ կառավարութիւնը գրաւելու կը միտի գալիք մուհաճիւրներու համար:

Այդ ազարակը տարուէ տարի վանքը կը ցանէ ու կը հնձէ: Թէ և մէկ մասը դարազի խալիլիս եղած է:

Պաշտօնական կերպով կաթողիկոսին հեռագիր է տրուած այս առթիւ:

Կաթողիկոսը քաջութիւն ունեցաւ հեռագրաւ հրաժարականը տալ — Պա՛նի թլանը պիտի առնէք, որ վարդապետաց ու որբ մանկտիներու հացը կը հայթայթէր, ուրեմն ուրիշ ճար չունիմ, ընդունեցէք հրաժարականս ու ինձ ալ վանք մը ցցուցէք, որ քաջութիւն հանգիստ կեանք մը անցունեմ:

Պատրիարքը հեռագրած է, յոյս տալով թէ մօտ օրէն կը կարգադրուի շնորհիւ Սուլթանին:


Կաթողիկոսն քանի մը վարդապետներով Ասանայ գալով, հոն կուպատէ, եթէ երբէք ետ շտրուի, մտադիր է կիլիկիոյ բոլոր եկեղեցիներու բանալիները յանձնել կառավարութեան:

Եթէ թլանը ետ շտրուի ու բանալիները յանձնուին հաւանականօրէն, ընդհարում մը տեղի ունենայ:

Հալէպի մէջ բաւական բանտարկեալներ կան՝ Ատանացի, Ուլնիացի, Հաճնցի, Գերմանիկցի (Մարաշցի):

Կառավարութիւնը շատ մեծ պատրաստութիւններ տեսած, ամէն զգուշութիւններ ձեռք է առած: Կիլիկիայէն մասնաւոր կասկած մը ունի:

Կիլիկիայի բոլոր ժողովուրդը ձանձրացած է, թուրք ժողո-



վորդը նոյն ինկ. Մէրսին մէկ-  
երկու շաբաթ առաջ տղայ մը  
ձերբակալուած է. Այդ տղան Եւ-  
րոպա բարեկամ մը ունի եղբը՝  
կըսուի թէ իրեն ազատական  
թերթը ուղարկուած է և այդ  
թերթը կառավարութեան ճի-  
րանը անցնելով՝ բանտը գրած  
են խեղճ տղան :

Արտասահման գտնուողները  
ազատ են և կը կարծեն թէ տյս  
կողմերն ալ ազատ է, ինչ ան-  
խոհմուտ թիւն, արտասահման  
գտնուող հայրենակիցներուն կը  
թելագրենք՝ որ քիչ մըն ալ մեր  
տեղական պայմանները ի նկատի  
ունենալով՝ զգուշանային այդ  
տեսակ յախուռն վտանգաւոր ու  
անզգոյշ քայլեր առնելէ :

(«Հնչակ») Կիլիկիցի

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յայտնում են քսրանով ի գիտու-  
թիւն Վառնայի Հայ հասարակու-  
թեան որ յառաջիկայ երկուշաբ-  
թի, յունիս 12, կըսկսին քա-  
ղաքիս Ազգ. երկսեռ վարժարա-  
նաց տարեկան հարցաքննու-  
թիւնները, որոնք հրապարակա-  
յին են և որոց կարող են, հե-  
տեւաբար, ներկայ գտնուիլ ինչ-  
պէս աշակերտաց և աշակերտուհի-  
եաց ծնողքները, նոյնպէս և բո-  
լոր փափաքող ազգայինք :

Հարցաքննութիւնները կը կա-  
տարուին Տնօրէնութեան կողմից  
նախապէս պատրաստուած ժամա-  
նակացոյցի համեմատ և կը տե-  
ւեն մինչեւ ամսոյս 24ը :

Քննութիւնները սովորաբար  
կըսկսին առաւօտեան ժամը 9ին

և կը տեսնեն մինչեւ 4. բացի  
կիրակի օրէն, յունիս 18, որ  
օրը, կէսօրէն յետոյ, քննու-  
թիւններ չեն լինիր :

Հոգաբարձութիւն Ազգ. երեսն  
վարժարանաց

(Կնիք)

9 Յունիս 1906

Վառնա

### ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Շար. Ասխորդ թիւեկ և վերջ)

Այս ամէնը շատ օգտակար կընա-  
յին ըլլալ ազգին, բայց երեսփոխան  
ներուն հոգը չէր ատրկա. Անոնք կը  
չահագրգռուէին միմիայն իրենց ան-  
ձին, իրենց բարեկամներուն և բնու-  
րողներուն շահերով. մնացեալը գո-  
յութիւն չունէր իրենց համար : Ու  
ճիշտ այս մասնաւոր շահերն էին որ  
Սօնիոսի նախարարութեան օրով վր-  
տանգի ենթարկուած էին :

Հոռոմի մէջ, երեսփոխաններ կան  
որոնք տարեկան հազարաւոր ֆրանք-  
ներ կ'առնեն միմիայն խորհրդարա-  
նին մէջ յառաջ բերելու համար իրար  
անցում մը՝ ոչ նախարարութիւնը կը  
փրկէ գծուարին վարկեանի մը մէջ.  
ամենաբուն ու ժողովուրդեմբարձա-  
կուններ գործելով կառավարու-  
թեան թշնամիներ վրայ, ի հարկին  
անամօթ սուտերով և նոյն իսկ բռու-  
նի ուժով, երեսփոխաններ կան ու-  
րոնք աւելի բարձր հատուցում մը  
կըտանան, ի փոխարէն մայրաքա-  
ղաքին կամ գաւառներու թերթե-  
րուն մէջ գովեստներ գրելու համար  
կատարած ընթացակարգով քաղաքա-  
գէտներու և գործի մարդոց բարե-  
կամ կառավարութեան հասցէին իսկ  
թուեաւոր ամբաստանութիւններ  
պարկեշտ քաղաքական մարդոց զէմ  
որոնք պիտի ուզէին անոնց ապրուս-  
տի աղբիւրը շորցնել :

Հոռոմի մէջ, իրագործ մը կայ, սր  
սողուններու սնտուկէն՝ 240,000  
ֆր. կըստանայ տարեկան. ասիկէ  
զատ, մայրաքաղաքին և գաւառ-  
ներուն մէջ բազմաթիւ թերթեր ալ  
կան, որոնք մէկմիմիայն ֆրանք կըս-  
տանան տարեկան : Տասնեակ եւ հար-  
իւրաւոր միլիոննոց ձեռնարկներ կան  
մայրաքաղաքին մէջ, որոնք կը սը-  
նանին կառավարութեան 5ին կամ  
նոյնիսկ 2ին տեղ 10 խելով : Առ-  
չոր թիւ մը կայ երեսփոխաններու  
և պաշտօնեաներու, որոնք բնու-  
րուած են ուրիշին բոլոր իրաւունք-  
ները կառավարելու խելով, և  
հանդիսաւորապէս խոստանալով ի  
րենց բոլոր գործութեամբ ուժ տալու  
ամենաշիւ ձեռնարկներու, աչք գո-  
ցելու կառավարութեան և իր բա-  
րեկամներու բոլոր յոռի արարքնե-  
րուն վրայ :

Այս բոլոր մարդիկը իրենց իշխա-  
նութեան վերջը հասած զգացին Սօ-  
նիոսի նախարարութեան բարձրա-  
նալովը. մասունք ու երեսփոխան-  
ները այլեւս չէին վարձատրուիր,  
դադրելու վրայ էր պատերազմական,  
ծովային հայթայթմանց պատրու-  
կին սակ սխտեմաթիքաբար կատա-  
րուող պետութեան շահագործումները.  
Ինչպէս պաշտօնեաները քիչ քիչ կը  
ճամբուէին, կառավարութիւնը ըս-  
տուգիւ կըզբաղէր երկրին բարիքով  
և ոչ թէ իր բարեկամները պարաբ-  
տացնելու հոգով :

Բացարձակօրէն պէտք էր տապա-  
լել այս կառավարութիւնը որ պե-  
տութեան այդ վաղեմի նեցուկները  
կը վառուէր, և արդարեւ, յար-  
ձակուած սկսեւ կատարօրէն, ի դուր  
Ճյօթի թիւ ջանաց համօրէլ իր բա-  
րեկամները սպառնալու, որովհետեւ  
կը հասկնար իւր ժողովուրդը Սօնիոսի  
անկման սովորի շատ աննպաստ կար-  
ծիք պիտի կազմէր իրենց մասին, և  
միանգամայն, որոհեաւ չէր ուզեր  
կառավարութիւնը ձեռք առնել այն  
ծանրակշիւ խնդիրներուն հետ ու-

րոնց լուծման կը կարօտէին. և  
զորս ինք լուծելու անկարող ըլլա-  
լով՝ ձգած փախած էր. Բայց իր բա-  
րեկամները չէին ուզեր, չէին  
կրնար սպասել, շատերը ուտելու  
հաց չունէին : Ու նախարարութիւնը  
տապալելու համար գործադրած մի-  
ջոցները անոնց հեղինակներուն բա-  
րոյական աստիճանին ճիշդ կը հա-  
մապատասխանէր. Այսպէս, պետա-  
կան գրասենյակի գործարան մը շինել  
չի տալու համար, երկիրը շահա-  
գործող միւս բոլոր գործարանները  
իրենց գործաւորները փոզոց նետե-  
ցին. ամէն տեսակ արգելքներ հանած  
ըլլալու համար, բազմաթիւ նահան-  
գապետներ (որոնց 69էն 58 ձիօրիթ-  
ի շնորհիւ ընտրուած էին) այլ և  
այլ խոտվութիւններ և բուռն ճնշ-  
չուններ ստեղծեցին, և Սարաիւնոյ  
մէջ ծովային նախարարութեան պի-  
տոյցի հայթայթիլ մը, որ զինուոր-  
ներուն ուսնասը մենաշնորհ առած  
էր իր վրայ և այդ միջոցով միլիոն-  
ներ շահած էր. արիւնալից խոտվու-  
թիւններ թելադրեց. բայց այս ա-  
մէն չի բաւցին. կառավարութիւնը  
ազգին ձեռնտուութեան սպասինս՝  
իր ճամբան կը շարունակէր : Բայց,  
վերջ ի վերջոյ ցանկալի ատիթը ներ-  
կայացաւ, ընկերվարական երեսփո-  
խանները, զիրեւք ընտրողներուն  
հետ ընդհարում մը ունենալով, խըմ-  
բովին հրատարեցան, կառավարու-  
թիւնը ասով իր բարեկամներուն մէկ  
կարեւոր սասը կը կորսնցունէր. տա-  
պալելու ժամը հասած էր :

Ճյօթի թիւ, իրենց ցած մարդ, չի  
համարձակեցաւ յարձակուած ուղղա-  
կի մը. իր կնոջ անհանգստութիւ-  
նը պատրուակ բռնելով, Հոռոմ ձը-  
գեց. բայց, Սօնիոսի մեկնելէն  
ետքը, բոլոր մարդիկը խրատեցին  
թագաւորը որ կառավարութիւնը  
լանձնէ Ճյօթի թիւին, ոճան. կա-  
ռավարութիւնը կողպտողներէն օգ-  
տուելու համար, ոճանք ալ զանոնք  
բարբոտին խայտառակելու համար :  
Արդարեւ, քիչ շատ արժէք ունեցող

### ԹՈՒՐԿՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԻ ՔՍԱՆԵՒՀԻՆԳՈՒՄԵԱԿԸ

1880—1905

(Նիւրիեր հայոց նորագոյն պատմու-  
թիւնից)

Ա.

Թուրքօ-քրդական նոր  
ղէպքերը. — Մի քառօրդ դար  
առաջ. — Գործեր և գործիչներ. —  
Ներսէս պատրիարք, Արիմեան Հայ  
րիկ, Կամարական — Քար  
թան է, Քլայթօն. —  
Վանայ Այրանացի  
վայրն. — Շէմզդի-  
նան և չէյիսի բազուլաւ : —  
Մար-Շիմոն. — Սյուն Չիլիս-  
գերեան. — Ուղեորութիւն զէպի  
Օսմանեան Քիւրդիստան :

(Շար. Ասխ. թիւեկ)

Հանգիստուոր շքով Շէյխը մուս-  
գործեց Վան և ապա ուղևորուեց  
Շէմզդինան, իհարկէ զա մեծ նշանա-  
կութիւն ունեցող անցք էր քրդերի  
համար և մեծ ուխտագնացութիւն  
սկսուեց զէպի այդ անկիւնը. Գրգերի  
արտասովոր համախմբումից իրանց

պիտի մօտ ասորոց կաթողիկոս Մար  
Շիմոնը անհանգստացած և յիշելով  
միևնոյն ատենը 1842 թ. մեծ ջար-  
դերը քուրդ ցեղապետ Բէդր-խան  
բէկին ձեռած կատարուած, փոյթ  
էր տարել անմիջապէս տեղեկագիր  
ուղղել Ռուսաց և Անգլիացոց կօն-  
սուլներին, ինչպէս նաև Հայոց Ա.  
աշխորդին, ու շարքութիւն հրաւի-  
րելով այդ հանգամանքի վրայ, իա-  
նը հաղորդուեց Գ. Պօլսի զեպանե-  
րին և Ազգային Պատրիարքարանին,  
Անդիական զեպան Լորդ Գիլֆօրթին  
հեռագրով հրահանգ տուեց Գիլֆօրթն  
Գիլֆօրթին անմիջապէս ուղևորուել  
Շէյխի մօտ և առձամբ ստուգել գոր-  
ծերի դրութիւնը Շէմզդինանում. իսկ  
պ. Կամարական բաւական համարեց  
Գիլֆօրթի Սիմոն Չիլիսգործանցին  
(որ այդ ժամանակ Տրապիզոնից հա-  
սել էր և Շէմզդինան էր գնում ըն-  
կուզի ծառերի վրայ գտնուած ուտերը  
կտրելու գործով) յանձնարարել խըն-  
դիրը ուսումնասիրելով մի տեղեկա-  
գիր կազմել և ուղարկել նրան Յօդ-  
ուածագիրն էլ. որ ատետրական  
գործեր ունենալով Քրդաստան պէտք  
է գնայի, օգտուելով պատեհ առթից  
անգլիական հիւպատոսի ապահով քա-  
րավանին միացայ և մեկնեցնիք Վա-  
նից :

Բ.

Առաջ. — Բաշկալա, —

«Կայծակ» վարդապետ. —  
Շէյխի մասին. — Քուրդներ  
— Մարշիմոնի մօտ. — Ուղէր  
լոր ջարդերի բուն հեղինակը. —  
Տորիներ և Վիզերի քաղաքակա-  
նութիւնը. — Անգլիական միսիան Ա.  
սորոց երկրում :

1880 թուականի ամսոն էր երբ  
վերջին հրաժեշտի ողբոյններ փոխա-  
նակելով ընտանեացու և բարեկամ ու  
ծանօթների հետ՝ ճանապարհ բնկանք  
ղէպի Բաշկալայ աւանը, որ Վանէն  
իբր 18 ժամ հեռաւորութեամբ Հա-  
քիարի (Աղբակից հարաւ) նահանգի  
գլխաւոր կեդրոնն է 6 կամ 7 հարիւր  
տներով, հայ, քուրդ և հրէայ, ճա-  
նապարհը անցնում է հինաւորաց Ան.  
ձեւացեաց գաւառով (այժմ Առաջ  
գաւառը) ուր ալ ու միս երեսում  
են ցան ու ջրիւ հայութեան անցեալ  
փառքի ու կուլտուրայի մնացորդ  
բեկորները, կիսաքանդ ամրոցներ ու  
պարիսպներ վանքերի ու եկեղեցեաց  
փլատակների, գիւղերի և աւանների  
աւերակներ, խոշոր խօջափարեով  
զարդարուն գերեզմանոցներ և այլն  
եւ այլն : Անցնելով Առաջ գիւղի  
վրայի Գիւղում. Առաջ կամուրջից,  
որ մի հինաւորաց քարաշէն պեղեցիկ  
չինուածք է ի յիշատակ Անձեւացեաց  
մի հայ իշխանուհու քարեգործու-

թեան, մենք վերջապէս հասնում  
ենք Առաջ գիւղը, որ աւազակ ջուր-  
ղերի մի ուղէ. ունենալով ամեն  
յարմարութիւն անց ու դարձ անող  
քարվանսերին, ճամբորդներին կո-  
ղպտելու :

Հասկացնելով հիւպատոսին զիւղի  
անապատութեան մասին, նա տե-  
ղական միտի իրից (պրիստաւ) զիշե-  
րապահներ պահանջեց և մենք հան-  
գիստ քնել կ'որոշեցանք : Միւս օրը  
Ջուրի կէտուկը բարձրանալով երե-  
կոյեան հասանք Բաշկալա, Տեսակ-  
ցելով հայոց առաջնորդ Յովնանէս  
վարդ. Բազուլի (Կայծակ) հետ, որ  
աշաւուրջ և քրդական գործերին  
լաւ հմտութիւն ունեցող մի մարդ  
էր, մենք տեղեկացանք որ իսկապէս  
Շէյխը զաղտնի հրահանգներէն ըն-  
քել Պօլսից և մի ինչ որ խուլ շնուկ-  
ներ կային քրդական շրջաններում,  
ի մօտոյ արշաւանքի նման մի բան  
սկսելու, բայց թէ ոճ վրայ, հայոց  
թէ ասորոց — զեւ չի որոշապէս յայտ-  
նուած :

Վարդապետը խուհուրդ տուեց  
կոնսուլին նախ գնալ Մար-Շիմոնի  
մօտ, որից աւելի ստոյգ տեղեկու-  
թիւններ կարելի էր ստանալ գործի  
գրութեան մասին : Ուստի և որո-  
շեց մարտուած փոխել և միւս օրը  
մենք ուղևորուեցինք Ջուրամէրկ ու-  
րի մօտ էն ասորոց կաթողիկոսի

բոլոր խորհրդականները մերթեմեային մասնակցել անոր նախարարութեան, եւ հիմա նախարարութիւնը կազմուեցաւ. որ իր մէջ կը պարունակէ պետութիւնը կողմնակիցութեամբ սակաւ խորհրդականներով օժտուած ամենէն անամօթ ներկայացուցիչները: Ճիշդ թիւի այս շորրորդ իշխանութիւնը ամենաստոր շահերու պաշտպանութիւնը: Իտալիոյ քաղաքական քախտախնդիրներու յաղթանակը պիտի սուսանդէ: Ազգը անոր ամենակատար հետեւեալները կը բերուի կողմնակիցութեան: Բայց այդ շարքէն պիտի ձեռք բարձր: Արդէն ծագուած կը շարունակուի: քաղաքական շատ մը անձնակերպութիւններ երկրին ու ազգին շահը պաշտպանել օգտած են: Եւ արդէն ճիշդ թիւի կրկին ստիպուած է լուծել այն բոլոր խնդիրները որոնցմէ խոյս տուած էր, իր բարեկամները չեն ուզեր որ այդ խնդիրները ձեռք առնուին, մինչքան երկիրը կուզէ: Սօսիոյ նախարարութիւնը ցուցուց որ կարելի էր պարկեղծ կտորավորութիւն մը ունենալ: ուստի երկիրը այլեւս չուզեր կաշառակերներ ու կաշառողներ:

Ճիշդ թիւի շորրորդ իշխանութիւնը երկար չի պիտի ըլլայ, միանգամայն վերջինն է այն:

**ՌՈՒՍՍԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

Ի շխարհահռչակ ռուս գրագէտ Թոլստոյը, խօսելով Ռուսիոյ ներկայ կացութեան վրայ, Տոմարի մասին հետեւեալ կարծիքը արտայայտած է.

«Ի՞նչ անվիճելի է՝ թէ ազգը իր ամենաընտրելի գուակները զբոսկեց որպէս երեսփոխաններ: Անոնցմէ շատերը եւ անձամբ կը ճանչնամ եւ ապահով եմ թէ՛ ա-

նո՞ք այնպէս սիրահարուած ու փարսած են սուրբ գործին ինչպէս անձնուէր մայրը իր զաւկին:

Այս մարդիկ գործնական ինքզինքով և գիտակցութեամբ հաւասարակշռուած են. երկայն տարիներ կեանքը իրենց վրայ փորձելով: Միտաբար, այն ներկայացուցիչներուն մէջ կան շատ մը տաք գլուխներ, որոնք առաջիններուն պէս փարսած են գործին, սակայն իրենց գիտցածին պէս միայն կը մտածեն: Անոնց մէջ կայ, ինչպէս ամէն կողմ, ոչնչվողներ որ գործին միայն իրենց աչքերով կը նային, նոյնպէս կան այնպիսիներ, որ կը տեսնեն այն միայն, որ ուրիշները կը ցուցադրեն:

Ռուս երեսփոխանութիւնը, ռուսական պատմական կեանքի ամենամեծ գրուածն է, և անով միայն հայրենիքը պիտի վերածնուի:


Եթէ մենք չը տեսնենք անոր պտուղը, զայն պիտի տեսնեն մեր զուակները: Մենք ամենաշահեկան կեանքն է որ կարգին: Ազգային ներկայացուցչութեան անվրդով կեանք անհրաժեշտ է: Ներկայացուցիչները իրենց յանձնուած գործը վերահիմնելու համար, որքան ալ դժուարին ըլլայ այդ գործը, պէտք է հաւատով, գիտակցութեամբ ու համբերտաբար աշխատին, և պիտի յաջողին: Ես կը կարծեմ թէ՛ ազգը չպէտք է որ Տոմարի ներքէն միայն իր պատճառով Վազը Տոմարի գործառնութեանց հետեւի: Այնպէս որ Տոմարի խօսելով երկրագործական հարցի մասին

ըսած է.

«Երկրագործական հարցի մասին ես շատոնց պատասխանած եմ: Ով որ կարգացեր է ռուսաւորութեան պտուղները, նա գիտէ թէ, որքան գիւղացիները հողի պէտք ունին, որովհետեւ անոնց սեփական հողը այնքան մեծ է, որ վառեակ մը չկրնար շրջիլ: Գիւղացիին համար հողը ոչ միայն պէտք է այլ անհրաժեշտ: Տուէք պէտք եղածին շափ իրեն հող, զայն կարելի չէ գիւղէն դուրս հանել. նա չերթար քաղաք գործ մուրալու: Քաղաքը անոնցմէ կերտած է գիւղացիներ, խուլիկաններ...»

Չինուորութեան գնացող երիտասարդը, այլեւս գիւղ չը վերադառնար: Գիւղին մէջ գործ մը չունենալով, նա քաղաքին մէջ պաշտօնեայ կը ըլլայ, կառապան, պահապան և այլն:

Մէն տարի գիւղը օգտակար գործաւորներ է և իր աղջիկներուն ապագայ ամուսիններէն կը զրկուի: Գիւղական պէտքերը կրնան որ աղջիկները գիւղէն գէպի քաղաք կը մղէ, անոնք հոն սմանէն առաջ սպասուհի, յետոյ գործաւորուհի իսկ հուսկ յետոյ հանրատներու զարգերը կը ըլլան, մինչքան անոնք հիանալի մայրեր ու գործաւորական ուժեր կրնային ըլլալ: Միմիայն այն երկիրը երջանիկ է ուր գիւղացին սովամահ չը լինիր, իսկ թշուառութիւնը հոն կը թագաւորէ ուր անօթութիւնը՝ մարդիկը իր ծննդավայրէն կը հեռացնէ:



**ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ 1920ԱՆ (Զուիցերիա) Ծ-րդ. տարեշրջան**

Լոզանի հայ կրթարանը սահմանափակ թւով աշակերտներ կը ընդունի: Աշակերտներու ընդունելութիւնը սեղի կուսնեայ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը, այն ատեն կը սկսին դաստիարակութիւնները:

Աշակերտներու ընդհանուր կըրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններուն մէջ. եւ ազգայինը, ինչպէս եւ թոյլ աւարկաներու պատրաստութիւնը՝ կրթարանի մէջ: Ընտանեկան կեանք:

Կրթարանս ունի ֆրանսերէնի եւ գերմաներէնի համար եւրոպացի ներքին օգնականներ:

Ընդունելութեան տարիք՝ 8-էն 15, Հինգ աշակերտներ զեւջով կը ընդունուին:

Մանրամասնութիւններու համար կարելի է դիմել Տիար Յ. Ս. Փափագանին, (Ատամարոյժ) Վառնա, կամ Տնօրէնին հետեւեալ հասցէով՝ Էնսթրիթիւ Արմէնիէն 1920ԱՆ [Առևիս]

**ՊԻՐՏԷՉ ՊԻՐՈՉՏԱ**

Պատիւ ունինք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ, ներկայ ամենայնիկ եղանակին համար, պարտէզիս մէջ հաստատած ենք նաեւ ճաշարան մը, ուր կատարեալ խնամքով ու մաքրութեամբ կը պատրաստուին ամէն կարգի կերակուրներ մասնաւորապէս վարձուած վարպետ արհեստաւորներու ձեռքով: Մովային լոգանքի կամ պոյտի համար քաղաքս այցելող պատ. հասարակութիւնը ամէն գիւրութիւն պիտի գտնէ մեր ճաշարանին մէջ, որ կրնայ ամենէն փափկաճաշակներն իսկ գոհացնել: Յարգոյ յաճախորդներուն զուարճութեան համար այնպէս կար-

ընակուած գիւղը Գոհաննէս: Զարգեալի գաւառի վայրին բարձրութեան վրայ շինուած այս աւանը 200 տուն զուտ ասորի բնակիչներով գեղեցիկ մի տեսարան է ընծայում իր բարձրարեւծ բարդի անտառներով եւ սիրուն, մաքուր խրճիթներով: Իսկ կաթնուղիկոսայ անը բաւակներն վայելուելի մեծ երկարկանի քարաշէն տուն է, ուր մենք հիւրնկալութեամբ Մար-Շիմոնի հրամանով եւ պարտ ու պատշաճ պատիւներով Այս լեռնական հոգեւորականի պարզ եւ անպաճոյճ կերպարանքը եւ շիտա եւ կացր մեծ տպաւորութիւն թողոց մեզ վրայ: Նա ոչ սինող ունէր իր կողքին, ոչ պրոկուրոր, ոչ քարտուղար եւ ոչ էլ գանձագետ. միայն մի քանի բարձրահասակ կտրիճ երիտասարդներ կային նրա շուրջը, որոնք զինուած էին սպիտակ կրթներով քրդական խանչալներով, եւ մեծ երկիւղածութեամբ թիկնապահութիւն էին անում իրանց եկեղեցական պիտին: Նա խօսակցում էր մեզ հետ թուրքերէն, իսկ հիւսիսային թարգմանը նրա անունները հաղորդում էր անգլերէն: Հարցը քրդական խորտոմի ըրի մասին էր ի հարկէ: Մեծ եղաւ մեր զարմանքը երբ Մար-Շիմոն յայտնեց որ չէ՛ ինք նրան մի նամակով հրաւիրել էր մօտ օրերում իր մօտ տեսակցութեան եւ խորհրդակցու-

թեան մի շատ կարեւոր գործի մասին, որին շուտով պէտք է ձեռնարկուէր բարձրագոյն հրամանով եւ հրահանգով:

— Իսկ դուք ի՞նչ պատասխանեցիք նրան, հարցրեց հիւսիսային կաթնուղիկոսից:

— Ոչինչ, միայն այսպիսի թէ մենք հինգ մէլիքներ ունենալով, որոնք կազմում են ազգային խնամակալութիւնը, հարկ է նախապէս դիմել նրանց, որպէսզի ժողովի միջոցով որոշուի նրա մօտ գնալու խնդիրը:

— Բայց ձեզ չի՞ թուում որ ձեր այդ պատասխանը կարող էր ուղղակի ղրաւորել Շիմոնի եւ գրգռել նրա թշնամութիւնը ասորացիէ՛մ, շարունակեց կոնսուլը:

— Այդպիսի մի բան կարող է պատահել, սակայն ես առանց մէլիքների գիտութեանը կարող չէի ինքս վրձնել թէ հարկ է գնալ թէ ոչ: Յետոյ այս էլ կայ որ 1842-ին մեր ազգը սոսկալի կերպով տուժեց քրդերի կողմից եկած այդ տեսակ հրաւէրներին ականջ կախելով որը ձեզ քաջ յայտնի պէտք է լինի կարծեմ, պատասխանեց Մար-Շիմոն:

— Ի՞նչ կարող է լինել Շիմոնի պատակը քրդերին իր մօտ համախրճելով, հարցրեց կրկին հիւսիսային:

— Անկաւակած նա որ եւ է գիտաւորութիւն պէտք է ունենայ մի արշա-

ւանք գործելու ի վրձ մայն անյաջողութեանց որ նա կրեց Զաւալեղիքի հետ միասին անցեալ պատերազմում, սոսկալի ջարդ ուտեղով Բայազիդում գնեցրալ Տէր-Ղուկասովի բանակից:

— Արշաւանք գործել, բայց զէպի ո՞ւր եւ ո՞ւմ վրայ:

— Ինձ համար բոլորովին պարզ է որ նա կը յարձակուի Վանայ վրայ. Զաւալեղիքն եւ Իւթաղուլան Բայազիդ գնալուց առաջ Վանում ուխտել էին, յաղթական վերադառնալիս պատերազմի դաշտից, այդ մեծ հայաշատ քաղաքը սրի եւ թալանի ենթարկելով հիմնադրական քարուքանդ անել: Բայց հակառակ լինելով յաղթահարեալ ու գլխակոր եղած մաղապուրձ յետ դարձան, ուր (Վանում) Սուլթանի յատուկ հրամանով հասած բաշտն Զաւալեղիքին թունաւորելով սատկցուց, իսկ Իւթաղուլանին էլ հրահանգ տրուեց՝ Մէլիքն ուխտի գնալու: Ահա՛ այդ վրէժն է որ նա այժմ ուզում է կատարել:

— Բայց չէ՞ որ այդ զէպուրմ նա աղղակի կառավարութեան հետ զէմ առ զէմ գործ կուեննայ քանի որ Սուլթանը չի կարող նրան թոյլ տալ իր հպատակներին կոտորելու:

— Ընդհակառակը ես բոլորովին վստահարար կարող եմ ասել ձեզ, պ. հիւսիսային, որ Սուլթանի կառավարութիւնը նրան չարգելելով հան-

դերձ, ուղղակի կամ անուղղակի էլ կ'օգնէ Շիմոնի իր այդ վատ եւ սոսկալի նպատակը իրագործելու: Ով էր մեզ ասորիներին 1842-ին շարունար կոտորել տուողը—Սուլթան Մէլիքը. ո՞վ էր 1862 ին Լիբանանում Մարոնիթ քրիստոնեաներին ու կիլիկիայում հայերին ջարդել տուողը—Սուլթան Ազիզը. վերջապէս ո՞վ էր դեռ երկու տարի առաջ Ռուսիայում (Բուլղարիա) տասնեակ հազար քրիստոնեաներին արիւն արցունքի գետերու մէջ ընալինջ անել տուողը—Սուլթան Համիդը. դուք տեսնում էք, որ ես, պ. հիւսիսային, որ Օսմանեան սուլթանների ընտրող քաղաքականութիւնն է ջարդել, կոտորել եւ հետզհետէ բոլորովին ընալինջ անել իրանց քրիստոնեայ հպատակ բոլոր ազգերին էլ հաւասարապէս: Գրդիրը առաջ հիւսիսային շէխանէ հրացաններով կոտորում էին մեզ անգէն, անպաշտպան քրիստոնեայ հպատակ ազգերին եւ ժողովուրդներին, իսկ այժմ նրանք գիւնուած են յոտից ցզուլիս այնալի, մարտինի եւ 16 հարուածանի վնասները փառաւոր հրացաններով. ո՞վ տուեց նրանց այդ նոր, եւրոպական կատարելագործած ընտիր զէնքերը ո՞վ, եթէ ոչ Սուլթան Համիդը. եւ ի՞նչ նպատակի համար. աւելորդ է ասել:

(Շարունակելի)

